ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N2285 - Ա **08 ապրիլի 2009թ.**

ՆՈՐ ԱՐԵՇԻ 22-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ.103 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐԱԶԴԱՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՂԱՐԻԲՅԱՆԻ, ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՂԱՐԻԲՅԱՆԻ, ՏԻԳՐԱՆ ՀԵՆՐԻԿԻ ՂԱՐԻԲՅԱՆԻ, ԱՐՄԱՆ ՎԱՐԱԶԴԱՏԻ ՂԱՐԻԲՅԱՆԻ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԱԶԴԱՏԻ ՂԱՐԻԲՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Վարազդատ Հովհաննեսի Ղարիբյանի (ծնված 03.11.1955թ.), Հենրիկ Հովհաննեսի Ղարիբյանի (ծնված 06.10.1948թ.), Տիգրան Հենրիկի Ղարիբյանի (ծնված 01.07.1974թ.), Արման Վարազդատի Ղարիբյանի (ծնված 16.11.1979թ.), Հովհաննես Վարազդատի Ղարիբյանի (ծնված 25.10.1987թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Նոր Արեշի 22-րդ փողոցի հ.103 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 467.05քմ, որից 425քմ մակերեսով հողամասը Վարազդատ Հովհաննեսի Ղարիբյանին, Հենրիկ Հովհաննեսի Ղարիբյանին, Տիգրան Հենրիկի Ղարիբյանին, Արման Վարազդատի Ղարիբյանին, Հովհաննես Վարազդատի Ղարիբյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 42.05քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1959 թվականը, 20.06.2007թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանման 21.01.2009թ. հ.3-310, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 30.03.2009թ. հ.20/2-Ե/163 գրությունները, Երևանի քաղաքապետարանի <Քաղաքաշինություն>> ՊՓԲԸ-ի 19.03.2009թ. հ.20-Ել-1944 եզրակացությունը, համաձայն որի Նոր Արեշի 22-րդ փողոցի հ.103 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Նոր Արեշի 22-րդ փողոցի հ.103 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Վարազդատ Հովհաննեսի Ղարիբյանի, Հենրիկ Հովհաննեսի

Ղարիբյանի, Տիգրան Հենրիկի Ղարիբյանի, Արման Վարազդատի Ղարիբյանի, Հովհաննես Վարազդատի Ղարիբյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 425քմ մակերեսով հողամասին կից 42.05քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 42.05քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Նոր Արեշի 22-րդ փողոցի հ.103 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Նոր Արեշի 22-րդ փողոցի հ.103 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Վարազդատ Հովհաննեսի Ղարիբյանի, Հենրիկ Հովհաննեսի Ղարիբյանի, Տիգրան Հենրիկի Ղարիբյանի, Արման Վարազդատի Ղարիբյանի, Հովհաննես Վարազդատի Ղարիբյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Էրեբունի թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**